

ուր Տէրը թոյլատրեց դեբրուն «մտանել ի խողեանն» (Ղով. Ը. 22-39): Սխալը յայտնի է. Կափառնաուժը Յորդանանի արևմտեան կողմը մեկնակէտ չի կրնար ըլլալ ցոյց տալու համար դիրքը քաղաքի մը որ 18 քմ. հեռու է դէպի արեւելք, ուր այս զիծին վրայ կը գըտնուին աւելի կարևոր քաղաքներ, ինչպէս Յուլիատ: Բաց աստի, Աւետարանի Կերգեսա քաղաքը Դ. դարուն աւերակ չէր, ընդհակառակը ծաղկեալ քրիստոնէութիւն մը ունէր եկեղեցիով միասին: Այս պատճառներով Յերոնիմոս սրբագրած է 12.2 քմ.ի, ինչ որ կատարելապէս կը համապատասխանէ Կափառնաուժի և Խիրպէզ Քէրազէհի հեռավորութեան (Bar. gd. էջ 428-429):

Աւետարանին մէջ յիշուած Քորազինի անէծքին մասին ուխտաւորները աւանդութիւն մը կը պատմեն. ինչպէս վերեւ յիշեցինք, Քորազինի փլատակներուն մէջ կը գտնուէր սինակոկի մը աւերակները, որոնց մէջ կը տեսնուին անոր քանդակազարդ սիւները, նաև քանդակներ այգեմշակներու՝ որ խաղող կը կթեն ու կը ճմլեն, կինդաւրոսներու՝ որ առիւծներու հետ կը կռուին, սիւնաշարքերու մէկ պատուանդանին վրայ կարգացուած արձանագրութիւն մը կը յիշատակէ սիւնաշարքին և սանդուխի հիմնադրին անունը:

Երբեմն ուխտաւորներուն պատմուած է թէ հըրեաները երբեք չեն կրցած լրացնել սինակոկի մը շէնքը, վասնզի Յիսուս հարցուցած ըլլալով գործաւորներուն թէ իրենք ի՞նչ կը շինեն, անոնք պատասխանած են թէ «ոչինչ»: Ատոր վրայ Յիսուս յայտարարած է. «Ինչ որ շինէք ոչինչ է, ան յաւիտեան ոչինչ պիտի ըլլայ»: Տեղն է հոս յիշել այն անէծքը որուն մէջ Քորազինի անունը Բեթսայիտայի և Կափառ-